

Մարդկային հաղորդակցությունը հոգելեզվաբանության համաշարում

Նինա Ջադինյան

Հանգուցային բաներ. լեզու և մտածողություն, լեզվական և արտալեզվական գործոններ, խոսքային վարքագիծ, «նախադասության ֆրեյմային տեսություն», շարահյուսական կառույցներ, լեզվի ձեռքբերման միջոց

Նախաբան

Հոգելեզվաբանությունը սերտորեն կապված է լեզվի և մտածողության հիմնական խնդիրների քննության հետ, որոնց միջև եղած հարաբերության հարցի խոր ուսումնասիրությունը կարելի է և հարկ է բացատրել հաղորդակցության համակարգի առնչության իմաստով:

Հաղորդակցությունը խիստ կարևորվում է մարդկային գործունեության բոլոր ոլորտներում, և հանրային բոլոր գիտությունների յուրաքանչյուր մաս կապված է դրա հետ՝ ուսումնասիրության ենթարկելով այն: Ինքնին հասկանալի է, որ հաղորդակցության հասկացության ուսումնասիրությունը խորապես էական է հոգելեզվաբանության համար, քանզի այն առնչվում է այնպիսի հարցերի քննությանը, ինչպիսիք են խոսքի արտաբերումն ու հասկացությունը, լեզվական ըմբռնումը, խոսքային վարքագիծը և այլն:

Հարկ է նշել, որ հոգելեզվաբանությունը միջգիտակարգային ոլորտ է և միաժամանակ առնչվում է լեզվաբանության և հոգեբանության հետ: Այն ոչ միայն կարևոր է լեզվի և մտածողության հիմնական խնդիրների հետ իր ներհատուկ առնչությամբ, այլև նրանով, որ այն, ի հավելումն դրա, ժամանակակից հանրային գիտության նախատիպն է և մեծ լուրս ունի մարդկության համալիր հետազոտության ամբողջական տիրույթում:

Հոգելեզվաբանության համաշարում հարկ է ուշադրության առնել մարդկային էակների և հաղորդակցության գործընթացի լեզվական վարքագիծը, մարդկանց հիմնական լեզվական կարողությունները՝ փորձելով պարզել, թե ինչպես կարելի է իրականացնել խոսքի արտաբերման և ըմբռնման սովորական ամենօրյա գործողությունները:

Պետք է նշել, որ մարդիկ կարող են հաղորդակցվել բոլոր զգայարաններով, և հաղորդակցության միջոցները սահմանափակվում են միայն անձի երևակայությամբ: Կյանքը տաղտուկ կլիներ, նույնիսկ անհնար՝ առանց հաղորդակցության, և վերջինս մեր վաղ կյանքի առաջին

պարտադիր անհրաժեշտ պայմանն է: Խոսքի արտաբերման և ըմբռնման թվացյալ պարզ գործընթացը բավականին բարդ է՝ ներառյալ մի շարք միասին գործող համակարգեր:

Հաղորդակցության երևույթը, գործընթացը և կառուցվածքը մշտապես եղել են բազմաթիվ լեզվաբանների, հոգեբանների և հոգելեզվաբանների ուշադրության և ուսումնասիրության կենտրոնում:

Մույն ուսումնասիրական աշխատանքի մեջ ներկայացված են ոլորտի մի շարք հանրահայտ տեսաբանների (Դ. Սթայնբերգ, Բ. Մքիներ, Ն. Չոմսկի, Պ. Սոպեր, Մ. Չապին և այլք) մոտեցումները՝ խնդրո առարկային առնչվող:

Այս հետազոտության նորույթն այն է, որ նրանում փորձ է արված դիտարկել մարդկային հաղորդակցության խնդիրը հոգելեզվաբանական տեսանկյունից:

Լեզու, մտածողություն և խոսք

Մինչև ուշ 1940-ական թվականները լեզվաբանները դիմեցին հոգեբանությանը, լեզվական միավորների ըմբռնողական հարակից բառերին՝ ըմբռնման և արտաբերման միջև եղած ընդհանուր հարցերի պատասխանը ստանալու ակնկալիքով: Նման հարցերը, անկասկած, մեծ կարևորություն ունեն այդ բնագավառի ուսումնասիրման համար: Անցյալ դարի 50-ականներին լեզվաբանության և հոգեբանության փոխազդեցության հարցերով զբաղվող հանձնաժողովներ ստեղծվեցին այնպիսի լեզվաբանների և հոգելեզվաբանների ղեկավարությամբ, ինչպիսիք են Թոմաս Մեբրքը և Չարլզ Օսգուդը: Այս փոխազդեցության շնորհիվ, երկու գիտությունների՝ հոգեբանության և լեզվաբանության աստիճանական սերտաճումից առաջացավ գիտության մի նոր ճյուղ՝ հոգելեզվաբանությունը:

Այժմ դիտարկենք հաղորդակցության խնդիրը խնդրո առարկայի տեսանկյունից, այն է՝ լեզվական, հոգեբանական և հոգելեզվաբանական: Նախ քննարկենք լեզվի և մտածողության խնդիրը հաղորդակցության մեջ:

Մտածողությունը իրականանում է լեզվի միջոցով, մեր մտքերը ծագում, ամրագրվում են մեր գիտակցության մեջ, գոյություն ունեն լեզվական հենքի վրա և հաղորդվում են բնական լեզվի օգնությամբ: Հարկ է նշել, թեև, որ այս դեպքում ոչ միշտ է ուշադրություն դարձվում իմացության գործընթացում լեզվի դերի որոշ յուրահատուկ առանձնահատկություններին: Երբեմն լեզուն ներկայանում է որպես մտքերի կազմավորման և դրանք այլոց հաղորդելու չեզոք միջոց, որի դեպքում ետին պլան է մղվում իմացության գործընթացում լեզվի գործուն դերը, այն էական հան-

գամանքը, որ լեզվի օգնությամբ ոչ միայն վերարտադրվում է շրջապատող իրականության տրամաբանական և մտային պատկերը, այլև այդ բարդ գործընթացի մեջ լեզուն մեծ ազդեցություն է թողնում իմացության վրա: Այս ամենով մեր գիտակցության մեջ ձևավորվում է աշխարհի լեզվական պատկերը, որը ոչ միշտ է համապատասխան աշխարհի տրամաբանական պատկերին, ուղեկցում է նրան՝ պահպանելով իր հարաբերական ինքնուրույնությունը: Աշխարհի այդ լեզվական պատկերը մեր շրջապատող իրականության բառային իմաստավորումն է, նաև լեզվական արտահայտումը: Իմացության գործընթացում լեզուն կարևորագույն դերակատարություն ունի, քանի որ հենց լեզվի միջոցով են ծագում և ամրագրվում մեր մտքերը, մտածողական գործունեության արդյունքները և դառնում սերունդների հոգևոր սեփականությունը:

Ընդհանուր առմամբ աշխարհի հասկացական պատկերն իմացության գործընթացում այս կամ այն կերպ զուգակցվում է աշխարհի բառային պատկերին, նրա լեզվական կաղապարի հետ: Լեզուն յուրովի ձևափոխում է մտածողական գործունեության արդյունքները, առաջադրում իրականության իր իմաստավորումը, կատարում իր ճշգրտումները շրջակա միջավայրի տրամաբանական արտացոլման մեջ, թեև դրանք ոչ միշտ է, որ շատ ճիշտ են:

Լեզուն ոչ միայն փաստերի հաստատման և տեղեկատվության հաղորդման միջոց է, այլև հույզերի, կամքի արտահայտման և մարդկանց վարքագծի վրա ազդելու միջոց: Լեզվի երկու առաջնային գործառույթները արտահայտմանն ու հաղորդակցմանն են: Լեզուն հասարակական բնույթ ունի, այն նաև հասարակության համար մտքերի արտահայտման միջոց է: Այդ իսկ պատճառով լեզուն մեր անձնական փորձի փոխանցումն է արտաքին և հասարակական փորձին:

Եթե լեզուն միտք է արտահայտում, ուրեմն լեզվի կառուցվածքի քննությունը պիտի ինչ-որ բան բացահայտի մտքի կառուցվածքի առնչությամբ: Անշուշտ, խելամիտ է, որ լեզվի և գիտակցության միջև հարաբերակցություն լինի, քանզի մենք «խոսում ենք մեր մտքով»՝ լեզվի օգնությամբ:

Խոսողների հիմնական լեզվական կարողությունների մասին խոսելիս պիտի նշել, որ լեզվաբանների, հատկապես հոգելեզվաբանների համար էական է բացատրել, թե ինչպես են մարդիկ կարողանում իրականացնել նախադասությունների արտաբերման և ըմբռնման երկու ընդհանուր ամենօրյա գործողությունները: Կարելի է ներկայացնել որոշ

հարցեր՝ խոսողների հիմնական լեզվական կարողությունների վերաբերմամբ, որոնք հստակ պատկերացում կտան հաղորդակցության գործընթացի մասին: Վերջին հաշվով այս ընդհանուր կարողությունների հետազոտումը խիստ կարևոր է հաղորդակցության կառուցվածքը, ինչպես նաև արդյունավետ հաղորդակցության հարցը խորությամբ ըմբռնելու համար:

Նախ պետք է նշել, որ «խոսողները կարող են արտաբերել և հասկանալ նախադասություններ, որոնք նախկինում երբեք չեն արել՝ ինչպես դրանց ծավալով, այնպես էլ երկարությամբ, և կարող են գնահատել այդ նախադասությունների ճիշտ կառուցվածությունը նույնիսկ առանց հարակից միջավայրային ենթաշարի» [1]:

Դ. Սթայնբերգը իր «Լեզու, միտք և աշխարհ» աշխատության մեջ խոսողի հիմնական ընդունակությունների մասին խոսելիս հիշատակություն է անում մի շատ հստակ և իրապես համամասնական տեսության վերաբերյալ [7]: Նա նշում է, որ խոսողների սովորած լեզուն իրապես ձեռք է բերում ամբողջական նախադասություններ: Խոսողները դա անում են՝ մտքում պահելով բառերի ամեն մի շարքի արտահայտած միտք, որը լսում են արտահայտած մտքի ենթատեքստի հետ միասին այնպես, որ այն ամբողջական միտք ներկայացնի: Այսպիսով, խոսողներն իրենց հիշողության մեջ պահում են մի շարք արտահայտած մտքեր և դրանց իմաստները:

Սակայն խոսողը, որ միայն գիտելիք ունի, արդեն չի կարող արտաբերել նոր, անծանոթ նախադասություն: Միայն նախկինում մտապահված արտահայտումները (արտահայտված մտքերը) կարող են արտաբերվել: Այսպիսով՝ նման խոսողը ի վիճակի չի լինի նոր իմաստ արտահայտող նախադասություն ասել, եթե այդ նախադասությունն արդեն փորձված և պահված չի եղել: Առաջին անգամ լսողը չի կարող հասկանալ դրա իմաստը, եթե այն ինչ-որ մեկը արտաբերել է որոշակի ենթաշարից դուրս: Ինչ վերաբերում է քերականությանը, ապա խոսողը հիմք չունի գնահատելու այդ արտաբերվածը, որն արդեն իմացվել է կամ նոր լսվել, քերականական է կամ ոչ:

Քանի որ բնական խոսքը հաճախ ներառում է տատանումներ, վրիպումներ նախադասության կեսին, խոսողը չի կարող իմանալ, թե ինչպիսին են հիմնական նախադասությունները, և թե արդյոք դրանք քերականակա՞ն են:

Այն, որ արտաբերվող նախադասությունների հաստատուն երկարություն կամ թիվ չկա, ապացուցվում է նրանով, որ խոսողը գիտի միայն նախկինում օգտագործված նախադասություններ, և չի կարող արտա-

բերել կամ հասկանալ ավելի երկար նախադասություն, քան այն, որ ինքն արդեն մտքում պահած ունի: Բայց և այնպես պարզ է, որ այն լեզվական իմացությունը, որին խոսողները տիրապետում են, թույլ է տալիս դա անել:

Ինչ վերաբերում է նախադասությունների թվին, այն անպայման սահմանափակ կլինի, եթե նկատի առնենք Դ. Մթայնբերգի վերը նշված մոտեցումը, քանի որ հայտնի նախադասություններ արդեն կարող են առաջանալ: Ոչ ոք չի կարող անթիվ անհամար նախադասություններ ամբարել մտքում: Համենայն դեպս ակնհայտ է, որ բանն այդ չէ: Այսպիսով՝ Դ. Մթայնբերգի առաջադրած հիշյալ մոտեցում-տեսությանը չհաջողվեց հարմարվել լեզվական գիտելիքների համապատասխանության որևէ էական չափանիշի՝ նկատի առնելով նորությանը, քերականությանը և նախադասությունների չնշված երկարությանը կամ թվին վերաբերող հիմնական կարողությունները:

Համաձայն Բ. Սքինների «նախադասության ֆրեյմային տեսության՝ խոսողները սովորում և յուրացնում են «ստանդարտ նշումներ» կամ «կմախքային ֆրեյմներ»՝ որպես նախադասության կառուցման հիմք [6]:

1957 թ. հատկանշական էր լեզվի տեսության համար: Այդ նույն թվականին երկու հանրահայտ տեսաբաններ՝ Բ. Սքիները և Չ. Օսգուդը, ինչպես նաև այդ ժամանակ անհայտ Ն. Չոմսկին գրքեր հրատարակեցին: Մինչդեռ Բ. Սքինների «Խոսքային վարքագիծը» և Չ. Օսգուդի «Իմաստի չափումը» կառուցվածք-ըջջանակ են տրամադրում լեզվի ուսումնասիրման բիհնիորիստական մոտեցման համար [6], Ն. Չոմսկու «Շարահյուսական կառուցվածքները» արմատական նոր մոտեցում է առաջարկում [2]: Ինչպես պարզվեց, Ն. Չոմսկու գաղափարները կոչված էին հեղաշրջում կատարելու լեզվաբանության մեջ և ստիպելու շատ հոգելեզվաբանների, մարդաբանների և փիլիսոփաների կասկածի տակ դնել իրենց ամենահիմնական ենթադրությունները:

Ըստ Ն. Չոմսկու՝ մարդիկ ծնվում են այլազան երևույթների վերաբերյալ բնատուր գիտելիք պարունակող բանականությամբ: Մտքի այդպիսի կարողություններից մեկը լեզվի հետ է առնչվում: Այդ բնատուր լեզուն Ն. Չոմսկին անվանել է LAD (լեզվի ձեռքբերման միջոց): Նա կարծում է, որ բանականության այդպիսի կարողությունները հարաբերականորեն անկախ են իրարից: Այսպես՝ ըստ նրա՝ բնատուր գիտելիքները միանգամայն բավարար են լեզվի ձեռքբերման համար, և դրանցում մաթեմատիկական կամ տրամաբանական գիտելիք չի պահանջվում: Իր աշխատություն-

ներում Ն. Չոմսկին այն հիմնավորումն է տվել, ըստ որի՝ բնական լեզվի քերականական բարդությունները այնպիսին են, որ միայն խիստ օժտվածները կարող են յուրացնել նման մակարդակի լեզու, այն էլ մի քանի տարվա ընթացքում: Ն. Չոմսկին պնդում է, թե բնատուր գիտելիքներն են հնարավոր դարձնում բնականոն նախադպրոցականի արագ առաջադիմելը վիթխարի շարահյուսական կառույցների պարագայում [4]:

Հարկ է նշել, որ ի վերուստ տրված գիտելիքը գործառնական չէ, սակայն հայտնի է նաև մեկ այլ մոտեցում, ըստ որի՝ մարդկային գիտելիքը կամ իմացությունը տրվում է փորձով, և երեխաներն անվերջ հարմարվող և տեղի տվող են [4]:

Փորձը լեզվի ձեռքբերման գործում էական տարր է: Դրա դերը, համենայն դեպս, այնքան էլ մեծ չէ գիտելիքի ձևավորման գործում, քանի որ այն կոչված է յուրացնելու արդեն ի վերուստ տրված և մարդու մեջ թաքնված լեզուն: Ն. Չոմսկու հաջողությունը սկիզբ է առնում իր առաջադրած քերականության՝ որպես պատվիրված կանոնների մի շարքի, ինքնատիպ հայեցակարգից:

Հաղորդակցության կառուցվածքը

Այժմ արդեն անցնենք բուն հաղորդակցության, ինչպես նաև հաղորդակցության կառուցվածքի քննությանը:

Խոսելը մարդկային կյանքի ամենաշարունակական և հատկանշական զբաղմունքն է. այն հանրային պայմանների արդյունք է և իր հերթին ներգործում է նույն հասարակության վրա, որը այն գործածում է:

Խոսքը շատ ավելին է, քան մեխանիկորեն պատկերված բառերի շարան: Խոսքն արտահայտում է զգացողություն և տրամադրություն, ինչպես նաև իրազեկության փոխանցում և դիտարկում, որ զբաղեցնում է մարդուն խոսելու պահին: Ինչպես Պ. Սոպերն է նշում. «Խոսքն ամբողջովին վերցված խոսողն ինքն է: Ամեն մի արտահայտած միտք խոսողի փորձի և խառնվածքի, մտադրությունների և զգացմունքների վայրկենական բացահայտումն է» [9]:

Ըստ Պ. Սոպերի՝ «Խոսքը մարդկային մտածողության գլխավոր լծակն է» [9]: Բառերով միտք արտահայտելու կարողություն չունենալու դեպքում մարդը ի վիճակի չէր լինի մտածելու և վերածվելու հանրային էակի:

Ըստ Մ. Չապինի՝ այն լեզուն, որ գործածում ենք, պայմանավորում է մեր ողջ մտածողությունը: «Առանց բառերի կարող ենք զգալ, բայց հազիվ թե կարողանանք կշռադատել» [1]:

Այսպիսով՝ բոլոր լեզուները ներգործություն ունեն մարդկանց վրա,

մենք խոսում ենք դրանցով, անգամ որոշ դեպքերում դժվարացնում դրանք, լայն հորիզոններ բացում դրանց մեջ: Սակայն լեզուների միջև եղած տարբերությունները այնքան էլ խոր չեն, որ անհնարին դարձնեն հասկանալը, քանի որ բոլոր մարդիկ միևնույն հիմնարար գիտելիքն են ուզում ունենալ:

Խոսքը մարդկային խառնվածքի անքակտելի մասն է, որն էլ սահմանում է անձը: Մեր օրերում, առավել քան երբևէ, խոսքը այն գլխավոր միջոցն է, որի աջակցությամբ մարդիկ ապրում են միասին ու հաղորդակցվում, կարողանում համագործակցել տեղային, ազգային և միջազգային մակարդակներում: Փաստորեն հաղորդակցվելիս մենք փորձում ենք ընդհանրություն հաստատել որևէ մեկի հետ, այսինքն՝ փորձում ենք կիսել տեղեկատվությունը, միտքը կամ կարծիքը: Ինչպես դիտարկված է «Հաղորդագրություն» գրքում, հաղորդակցության էությունը հատուկ մի հաղորդման համար իրար «ներդաշնակող» ստացող և ուղարկող գտնելն է [5]:

Բնական լեզուն մեզ հասանելի ամենաբազմաբնույթ հաղորդակցման միջոցն է, քանի որ ըստ հայեցողության կարող ենք օգտագործել այն՝ հաղորդելու ցանկացած բնույթի տեղեկատվություն: Ըստ Պ. Սոպերի՝ յուրաքանչյուր լեզվական արտահայտություն երկու պատճառների կամ դրանց միասնության արդյունքն է. այդ պատճառներն են արտահայտելու կարիքը և միտք կիսելու ցանկությունը: «Միտք կիսելը նշանակում է բազմապատկել դրա ուժը» [9]:

Հաղորդակցության բազմաթիվ սահմանումների մեջ հետևյալը հատկապես ուշագրավ է, այն սոսկ հավաստում է, թե «Մարդ չի կարող չհաղորդակցվել» [8]:

Նման սահմանումը, հիրավի, շատ կարևոր է հաղորդակցության ընդհանուր ուսումնասիրության համար: Լռությունն անգամ հաղորդագրություն է տալիս, երբեմն շատ ավելի ասելիքաշատ, քան երկարատև խոսակցությունը կամ խնամքով պատրաստված դասախոսությունը: Հաղորդակցությունը մեր շուրջը կատարվող մի չափազանց ընդարձակ և բարդ գործընթաց է՝ մի գործընթաց, որը ներառում է իրար հետ ներդաշնակ գործող մի շարք համակարգեր:

Այժմ դիտարկենք այն հարցը, թե ինչու է հաղորդակցությունը եական:

Անկախ այն բանից, թե ինչ միջավայրում է մարդը՝ տեղեկատվություն ստանալիս թե այլուր, մշտապես հաղորդակցային հարաբերու-

թյունների մեջ է: Հոգեբանության մեջ միաժամանակ տարբերակում են հանրային և որոշում կայացնելու կարիքների հետևյալ տիպերը, որոնց մարդիկ անընդմեջ բախվում են իրենց ողջ կյանքում: Մարդիկ ունեն մի շարք հանրային կարիքներ: Առաջինը՝ մարդիկ հաղորդակցվում են զուտ հաճույք ստանալու համար: Շատ դեպքերում մարդիկ զրուցում են պարզապես ժամանակ անցկացնելու համար: Սա հաղորդակցային ակտ է, որ հաճույք է պատճառում մարդուն: Երկրորդ՝ մարդիկ հաղորդակցվում են բնականոն հարաբերություններ ստեղծելու և դրանք խորացնելու նպատակով: Առաջին անգամ մարդկանց հանդիպելիս նախ՝ փորձում ենք պարզել, թե ինչ ընդհանուր բաներ կան մեր միջև, այնուհետև՝ թե մեր կարծիքները որքանով են համընկնում որոշակի հարցերի շուրջ: Եվ եթե ընդհանրություններ կան և երկուստեք դուր են գալիս միասնական շփումները, այնժամ ընկերանում ենք: Լավ հիմքերի վրա դրված հարաբերությունները մարդկանց մղում են խոր բարեկամական հաղորդակցության:

Հանրային խնդիրներ լուծելուց զատ հաղորդակցությունը նաև անհրաժեշտ է որոշումներ կայացնելու գործում: Ամեն օր մարդիկ անձնական փոքր ու մեծ որոշումներ են կայացնում: Նման շատ որոշումներ կայացնելիս մարդիկ հաղորդակցվում են մյուսների հետ: Այսպես՝ մարդիկ կրթական, հանրային և գործնական որոշումներ են կայացնում մյուսների հետ խոսքով՝ անհրաժեշտ տեղեկություն ստանալու, մտքեր փոխանակելու և, ի վերջո, հարցին որոշակի լուծում տալու ակնկալությամբ: Եվ միայն նման հաղորդակցության դեպքում կարելի է պարզել, թե ինչպիսի տեղեկատվությունն է էական ու արդյունավետ:

Այսպիսով՝ մարդիկ իրենց ժամանակի մեծագույն մասը անց են կացնում հաղորդակցվելով: Մի շատ կարևոր հանգամանք, հիրավի, պետք է հաշվի առնել այստեղ, այն է՝ հաղորդակցությունը տեղի է ունենում և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական իրադրություններում:

Հաղորդակցությունը մեծ մասամբ տեղի է ունենում ոչ պաշտոնական, չկանխատեսված իրադրություններում, այն է՝ հարազատների, մտերիմների հետ ամենօրյա խոսակցություն ունենալիս: Այդ տիպի ոչ պաշտոնական իրադրությունները ներառում են խոսակցություններ, որոնցում մեկը ծանոթացնում է մյուսներին, ցուցումներ տալիս, տեղեկություններ ստանում կամ հաղորդում, խոսում հեռախոսով: Նման ոչ պաշտոնական միջավայրում հաղորդակցությունը շատ ավելի ինքնաբերու է՝ հիմնականում չնախագծված: Եվ թեև հաղորդակցությունը շատ ավելի հազվադեպ է տեղի ունենում պաշտոնական իրադրություններում,

հենց այդ իրավիճակներում է, որ մարդիկ հնարավորություն են ունենում ազդելու միւսյանց մտքերի և զգացողությունների վրա կարևոր իրադրություններում կամ մեծ թվով մարդկանց մեջ: Պաշտոնական իրադրային վիճակներն այսպիսին են, որոնց համար մարդիկ կարող են իրենց հաղորդակցությանը կանխավ պատրաստվել: Պաշտոնական հաղորդակցային իրավիճակները պարունակում են հետևյալը՝ աշխատանք և համալսարանական հարցազրույցներ, խմբային քննարկումներ, հրապարակային ելույթներ, բանավեճ, լուսաբանման իրավիճակներ, էլեկտրոնային կապի հաղորդակցություն և այլն:

Հաղորդակցության տեսակները և համակարգերը

Հարկ է դիտարկել և բացահայտել հաղորդակցության տեսակները և միասին գործող բոլոր համակարգերը, որոնք կազմում են հաղորդակցության գործընթացը: Հաղորդակցության կառուցվածքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հաղորդակցության համակարգը պարունակում է հինգ բաղադրիչ մասեր՝ սկզբնաղբյուր, փոխանցող, տեղեկատու աղբյուր, ընդունող և նպատակատեղ (վերջնանպատակ): Այս բաղադրամասերը առկա են ամեն տեսակի հաղորդակցության մեջ, սակայն արդյունավետ կերպով հաղորդակցվելու համար մարդիկ կարիք ունեն իրենց հաղորդագրության պատասխանն ստանալու, այն է՝ հետադարձ կապին խոսքային կամ ոչ խոսքային արձագանք տալը՝ համոզված լինելու, որ իրենց հաղորդակցություն-ուղերձները ստացել, հասկացել և մեկնաբանել են լսողները (ունկնդիրները): Հետադարձ կապի բացակայությունը սովորաբար հանգեցնում է հաղորդագրության ձախողման և հաղորդակցային գործողության անկատարության:

Մեկ այլ ոչ պակաս կարևոր հարց է այն, որ հաղորդակցությունը միակողմանիորեն չպետք է դիտարկել, այլ դիտել որպես տեղեկատվության կիսում կամ փոխանակում: Այսպես՝ խոսակիցները փոխանակում են խոսողի և լսողի դերերը հաղորդակցության ընթացքում: Խոսակիցների եռանդը կարող է հավասար լինել կամ լավ տարբերակվել՝ կախված նրանց զրուցասիրությունից, խոսքային կարողություններից, իմացության մակարդակից, հաղորդակցության նկատմամբ ունեցած հետաքրքրությունից կամ այլ գործոններից: Տարբեր աստիճաններում տեղի ունեցող դերափոխանակությունը ևս կախված է այն բանից, թե արդյո՞ք հաղորդակցությունը ուղարկվում է, կամ հետադարձ կապը՝ ապահովվում: Այս առումով հարկ է ընդունել, որ հաղորդակցային ակտը կարող է ներկա-

յացվել հաղորդակցային ակտերի շղթա, եթե առաքողը և ընդունողը հաղորդակցության ընթացքում համապատասխանաբար փոխում են դերերը: Այսպիսով՝ սովորական խոսակցությունը չի սահմանափակվում միայն մի շարք «դրդապատճառ-պատասխաններով», այն առաջ է ընթանում նոր փուլեր ներառելով: Դիտողությունները սերտորեն կապված են իրար հետ, դրանք միահյուսված են և իրար շարունակող: Հետևաբար, մի դիտողություն-ռեմարկը մյուսի հետ միասին (որից կախված է և առանց որի՝ ճիշտ չի կարող հասկացվել) կազմում է երկխոսության գլխավոր բջիջը, այսպես կոչված «հաղորդակցային միավորը»: Ինքնըստինքյան հասկանալի է, որ կարելի է խոսել հաղորդակցային միավորի մասին միայն այն դեպքում, երբ այն պարունակող բոլոր տարրերը առկա են, հատկապես՝ հետադարձ կապը: Ուստի, ինչպես բառային հաղորդակցության իմաստն է ենթադրել տալիս, մենք ինչ-որ մեկի հետ հաղորդակցվելիս փորձում ենք ընդհանրություն հաստատել և պետք է հմուտ լինենք այդ հարցում հաջողության հասնելու համար: Մենք պետք է իրականացնենք հաղորդակցության այս համընդհանուր և շարունակական «պետք է»-ն մեր կյանքի յուրաքանչյուր քայլափոխին:

Մենք քննարկեցինք «հաղորդակցություն» հասկացությանն առնչվող հիմնական հարցերը, որոնք են հաղորդակցությունը, խոսքի ծագումը, հաղորդակցության տեսակները և հաղորդակցության անհրաժեշտությունը:

Հաղորդակցության տիպերի մասին խոսելիս առաջինը պիտի հիշատակվի այն հանգամանքը, որ հաղորդակցությունը բազմաբնույթ բնագավառ է: Անշուշտ, այն երբեմն շատ լայն առումով է դիտարկվում և ներառում հաղորդակցության ընթացքին առնչվող բազմաթիվ ոլորտներ: «Հաղորդակցություններ» գրքում հիշատակված է, որ դրա գործառության գլխավոր միջոցներն են լրագրությունը, հասարակայնության հետ կապերը և գովազդը թերթում և հեռուստառադիոհաղորդումներում, ինչպես նաև լուսանկարային հաղորդակցությունը՝ անխոս նկարներով ու շարժանկարներով, թափանցապատկերներով, պաստառներով և զանազան գրավոր հաղորդակցային ձևերով: Բացի այդ՝ գոյություն ունի նաև ձայնային հաղորդակցությունը՝ հեռախոսով և խոսքով [3]:

Չնայած բոլոր այս հիշատակված ոլորտներում առկա զանազանությունը, ուր որ հաղորդակցություն կա, շատ հաճախ դրանցում նույն սկզբունքն է գործում: Ամեն անգամ հեռախոսով խոսելիս կամ նամակ գրելիս ու գովազդ պատրաստելիս փորձում ենք կապել հաղորդակցությունների ասելիքը մի կողմի հետաքրքրությունների հետ: Մասնավորա-

պէս՝ մենք սա անում ենք բարեկամական նկատառումներից ելնելով՝ ըստ էության խոսելիս, միտք հղանալիս և այլն: Եվ բնավ զարմանալի չէ, որ այս ընդհանուր թելերը անցնում են հաղորդակցության բոլոր տեսակների միջով:

Հաղորդակցության վերը նշված բոլոր տեսակներից մենք առավել շատ կառնչվենք միջանձնային հաղորդակցության հետ: Հաղորդակցությունը անհրաժեշտություն է, որը տեղի է ունենում մեր վաղ կյանքի տարիներին փաստորեն դա մարդու շնչելուց հետո երկրորդ կենսական անհրաժեշտությունն է: Ի նկատի ունենալով նշված հաղորդակցային ձևերը՝ սկսած մանկական առաջին ճիչից և ավարտված բարձր մակարդակի հաղորդագրություններով և հասարակության հետ ունեցած կապերով ասես շատ ընդհանրություններ չունեն, սակայն, ըստ էության, դրանք լիովին նույն բաներն են, քանի որ դրանց հիմնական նպատակը միտք կամ իրազեկություն տալն է: Ամեն անգամ հաղորդակցային որևէ իրավիճակում, խմբի հետ կամ առանձին անհատների հետ շփումներում մենք ներքաշվում ենք հաղորդակցության մեջ, և շատ հմուտ պիտի լինել հաջողության հասնելու համար [3]:

Հնարավոր է, որ չգիտակցենք, թե հաղորդակցությունը հետաքրքրում է մեզ թե ոչ, կամա թե ակամա է այն, մենք մշտապես ներգրավվում ենք դրան: Ընդհանուր առմամբ, հաղորդակցության մեջ մտքեր ենք կիսում կամ տարբեր ձևերով ստանում դրանք, որոնց գերակշիռ մասը մեր հինգ զգայարաններն են ներառում: Գրավոր կամ բանավոր ասված բառերը հաղորդակցության մեր ամենաընդհանուր միջոցներն են, թեև դրանք իրազեկություն տալու միակ միջոցը չեն: Հանրահայտ առածը հավաստում է. «Լավ է մի անգամ տեսնել, քան հազար անգամ լսել»: Միանգամայն տիպիկ մի մեկնաբանություն: Խիստ հավաստի է այդ առումով հետևյալ ձևակերպումը. «Հաղորդակցության ձեր միջոցները սահմանափակվում են միայն ձեր երևակայությամբ» [3]:

Բառերը, օրինակ, արտահայտում են տեսողական կամ ձայնային զգացողություններ: Մենք կարդում և լսում ենք բառեր: Հաղորդակցության մեծ մասը հետամուտ է այս երկու զգացողությանը, թեև, ինչ խոսք, մյուսները ևս օգտագործվում են: Այս ամենից դատելով՝ իրավամբ, կարելի է հաստատել, որ մարդը հաղորդակցվում է իր բոլոր զգայարաններով անխտիր, այլ կերպ ասած՝ ընդգրկվում հաղորդակցության մեջ: Նկատի առնելով այս՝ Պ. Սոպերը նշում է, որ ինելամիտ բանավոր խոսքը արմատապես տարբերվում է գրավոր խոսքից այն իմաստով, որ այն շատ

առումներով ավելի կենդանի է ու վառ, քանի որ թե՛ խոսողը և թե՛ լսողը առկա են և տվյալ պահին զբաղված՝ որոշ հարցեր քննարկելով [9]:

Ցանկացած պարագայում խոսքը երբեք դատարկ տարածության մեջ չի արտաբերվում, այն մշտապես հասցեագրվում և ուղղորդվում է որևէ մեկի:

Ինչքան լավ ենք հաղորդակցվում, այնքան դյուրին են դառնում մարդկային հարաբերությունները: Այսպիսով՝ երկու խիստ հրատապ պատճառ կա, որի համար պետք է տիրապետենք հաղորդակցության տեխնիկային: Մեկն այն է, որ կարող ենք հասկանալ այլոց, իսկ մյուսն էլ այն, որ ուրիշները կարող են մեզ հասկանալ: Հետևաբար այս ամենից դատելով՝ կարելի է եզրակացնել, որ հաղորդակցության տեսակը մեծապես կախված է երկու հանգամանքից, այն է՝ ինչ ենք ուզում հաղորդել և ում ենք ուզում հաղորդել: Անշուշտ, պետք է հաշվի առնել այն իրազեկությունը, որ ուզում ենք փոխանցել, ինչպես նաև լսարանի չափը և հետաքրքրության շրջանակը՝ հաղորդակցության ընթացքում:

Եզրակացություն

Հարկ է ուրվագծել այս ուսումնասիրման մի շարք եզրափակիչ կետեր. դրանք են.

1. Լեզվի և մտածողության միջև հարաբերակցության հարցի խոր հետազոտությունը առավելագույն առնչություն ունի հաղորդակցության ողջ համակարգի ըմբռնման համար:
2. Այն բանի բացատրությունը, թե ինչպես են մարդիկ իրականացնում խոսքի արտաբերման և ըմբռնման երկու ընդհանուր ամենօրյա գործողությունները, ուղղորդում է մեզ՝ հասկանալու մարդկանց հիմնական լեզվական ունակությունները:
3. Մարդիկ կարող են հաղորդակցվել բոլոր առումներով, և հաղորդակցության միջոցները սահմանափակվում են միայն որևէ մեկի երևակայությամբ: Սա հանգեցնում է հաղորդակցության տարբեր տեսակների առաջացմանը՝ ինչպես խոսքային, այնպես էլ ոչ խոսքային:

Ընդհանուր առմամբ մարդկային ճանաչողության երկու տարբերակ կա՝ գիտական և գեղագիտական, իսկ մարդկային մտածողության երկու ձև՝ տրամաբանական և երևակայական, և դրանք պետք է դիտարկել հաղորդակցության տեսանկյունից: Գիտությունը և արվեստը ճանաչողության երկու ձևեր են, որոնք փոխադարձաբար լրացնում են իրար: Գիտությունը խորհրդանշանների շարք է, որ գիտնականները օգտագործում են՝

փոխանցելու իրենց իմացությունը այլոց: Հաղորդակցությունը պետք է բաղկացած լինի մի շարք գիտական խորհրդանշաններից: Հաղորդակցային գիտության բնորոշ հայեցակետն այն է, որ դրա գիտական խորհրդանշանները առնչվում են այլ տեսակի խորհրդանշաններին: Ամենօրյա հաղորդակցության սովորական լեզուն մի շարք գիտությունների մեջ, իրավամբ, դառնում է քննության առարկա:

Այսպիսով՝ մարդկային հաղորդակցությունը անհնար է համալիր քննության ենթարկել առանց խնդրո առարկայի լեզվական, հոգեբանական առավելապես հոգելեզվաբանական դիտարկման:

Գրականություն

1. Chapin Miriam. “How People Talk”, New York, 1947.
2. Chomsky N., “Syntactic Structures”, The Hague/Paris: Mouton, 1957.
3. «Communications. Boy Scouts of America», New Brunswick, New Jersey, 1967.
4. Introduction to Social Psychology: a European Perspective. Edited by Miles Hewstone. Wolfgang Stroebe and Geoffrly M. Stephenson.
5. Messages: “A Reader in Human Communication”. Edited by Jean M. Civikly. Wilbur Schramm. How Communication Works”, New York, 1974.Oxford. Blackwell Publishers Ltd, 1996.
6. Skinner B. F., “Verbal Behaviour”, Appelton – Century – Crafts, New York, 1957.
7. Steinberg D. D., “Psycholinguistics: Language, Mind and World.”, London, New York, 1984.
8. Watzlawick P., Bevin J.H. and Jackson D. “Pragmatics of Human Communication”, New York, 1967.
9. Сопер П. Л., Основы искусства речи, “Прогрес-Академия”, Москва, 1992.

Межличностная коммуникация в психолингвистическом контексте

Нина Джагинян

Резюме

Ключевые слова: язык и мышление, лингвистические и экстралингвистические факторы, речевое поведение, «фреймовая теория предложения», синтаксические конструкции, средство овладения языком

В статье представлены вопросы, связанные с межличностной коммуникацией, которые мы рассмотрели с психолингвистической точки зрения. Главная задача данного исследования – разъяснить некоторые существенные особенности коммуникации: язык и мышление, речевое поведение, лингвистические и экстралингвистические факторы, синтаксические конструкции и т.д. Коммуникация – всеобщее явление, которая занимает центральное место в нашей жизни. Она составляет неотделимую часть человеческой жизни и включает в себя различные действия с целью распространения и обмена сообщениями и важной информацией, а также обеспечения обратной связи. Во время коммуникации люди в различных ситуациях и контекстах выражают мысли средствами вербального или невербального общения, поэтому контекстуальные проблемы также необходимо учитывать в процессе коммуникации. В проведенном исследовании мы попытались изложить важность психолингвистического подхода в коммуникативном акте.

В статье представлены гипотезы и концепции, связанные с коммуникативной сферой, ряда известных теоретиков. В работе мы ссылаемся, в основном, на труды Д. Стейнберга, Б. Скиннера, Ч. Осгуда, Н. Хомского, П. Сопера. Определенное внимание мы уделили языку и мышлению, «фреймовой теории предложения», речевому поведению, синтаксическим конструкциям, а также «речевым актам», которые включают в себя взаимовлияния реальной жизни, оказывают большое воздействие на человеческие эмоции, мысли, действия и требуют не только лингвистических знаний, но и специфических применений этого языка в различных областях.

Целью статьи является попытка по возможности рассмотреть главные компоненты коммуникативного процесса, в основном, с точки зрения психолингвистического анализа.

Human Communication within the Context of Psycholinguistics

Nina Jaghinyan

Summary

Key words: *language and thought, linguistic and extralinguistic factors, verbal behavior, "Sentence frame theory", syntactic structures, language acquisition device*

The article touches upon some observations on human communication within the framework of psycholinguistics. The main objective of this study is to highlight some of the communication issues, such as language and thought, verbal behavior, linguistic and extralinguistic factors, syntactic structures. etc.

Communication is universal to all human beings and represents a central element to our lives. It is an integral part of human life and includes different activities, disseminating and exchanging messages, important information and feedback.

When communicating people express ideas through the exchange of verbal and nonverbal messages in various situations and contexts. In this study we've tried to highlight the importance of the psycholinguistic approach to communication. The paper presents various approaches by some famous scholars of the sphere. Here we've mainly referred to the standpoints of D. Steinberg, Ch. Osgood, N. Chomsky and P. Soper. We've paid partial attention to the issues of language and thought, "Sentence frame theory", verbal behavior, syntactic structures and speech act, the latter includes real life interactions and has a great effect on human feelings, thoughts, actions. It requires not only linguistic knowledge, but also special language application from different perspectives. We've tried to observe all possible important components of the communication process, especially from psycholinguistic analytical viewpoint.

Ներկայացվել է 29.09.2021 թ.

Գրախոսվել է 04.10.2021 թ.

Ընդունվել է տպագրության 29.11.2021 թ.